Ն ա խ ա գ ի ծ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«-----» ---------- 2008 թվականի N ------- Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի N 870-Ն որոշման N 1 հավելվածի 33-րդ կետը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքները և չափանիշները՝ համաձայն հավելվածի։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

ՀՀ կրթության և գիտության նախարար Սպարտակ Սեյրանյան

Հավելված
ՀՀ կառավարության 2008 թվականի
---------- « » -ի N -Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

1. Հայագիտությունը, որպես Հայաստանի Հանրապետության համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բնագավառ, իր առաջնահերթ տեղն ունի գիտության և տեխնիկայի զարգացման գերակայություններում:
2. Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման սկզբունքներն են.

   1/ պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ռազմավարական խնդիրների լուծումը,

   2/ միջազգայնորեն հեռանկարային համարվող գիտահետազոտական խնդիրների լուծումը,

   3/ տվյալ ուղղությամբ գիտական դպրոցի առկայությունը (կամ դրա հիմնադրման հնարավորությունը),

   4/ ազգային անվտանգությունից բխող խնդիրների լուծումը:
3. Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման չափանիշներն են.

   1/ հետազոտությունների իրագործման համար անհրաժեշտ և բավարար պայմանների (կամ դրանց ստեղծման հնարավորությունների) առկայությունը,

   2/ տվյալ գիտական ուղղությամբ տարվող հետազոտությունների համապատասխանությունը հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարական գերակայություններին,

3/ տվյալ գիտական ուղղության զարգացման միջոցով միջազգային և տարածաշրջանային խոշոր գիտական ծրագրերին ինտեգրվելու հնարավորությունը,

4/ համաշխարհային շուկայում գիտատար ապրանքների և ծառայությունների ուրույն տեղի պահպանման (կամ ստեղծման) հնարավորությունը,

5/ հանրապետության բնակչության առողջության պահպանմանը և կյանքի որակի բարձրացմանը նպաստելու աստիճանը,

6/ ազգային անվտանգության մակարդակի բարձրացման հնարավորությունը,

7/ տեխնոլոգիական անվտանգության մակարդակը բարձրացնելու հնարավորությունը,

8/ արդիականությունը՝ բնապահպանական տեսանկյունից:

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱՅԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության տնտեսության վերընթաց զարգացման համար կարևորագույն ռազմավարական խնդիր է գիտության և տեխնիկայի առաջընթաց զարգացումը, գիտական և գիտահետազոտական աշխատանքների արդյունքների արդյունավետ ներդրումը տնտեսության մեջ: Գիտական, տեխնոլոգիական և ինովացիոն գործունեության բնագավառում պետական քաղաքականության արդյունավետության բարձրացման հիմնական մաս է կազմում գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների հստակեցումը:

Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ընտրության նպատակն է նպաստել հանրապետության.

- բնակչության առողջության պահպանմանը և կյանքի որակի բարձրացմանը,
- տնտեսական զարգացման արագացված աճի ապահովմանը,
- տնտեսության հեռանկարային զարգացման համար համապատասխան նախադրյալների ստեղծմանը,
- ազգային անվտանգության մակարդակի բարձրացմանը,

- բնակչության կենսաբանական անվտանգության պահպանմանը:

Գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունները սահմանելիս անհրաժեշտ է իրականացնել.

- Հայաստանի Հանրապետությունում գիտության իրական վիճակի վերլուծություն և զարգացման հեռանկարային կանխատեսման գնահատում, համեմատություն միջազգային մակարդակի և գիտության զարգացման համաշխարհային կանխատեսման հետ,
- գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառներում բարձր որակավորում ունեցող փորձագետների ընտրություն,
- գիտության և տեխնիկայի բնագավառների բազմամակարդակ դասակարգման նպատակով փորձագիտական հարցման կազմակերպում և իրականացում՝ զուգակցելով անկախ փորձագետների և փորձագիտական խորհուրդների եզրակացությունները,
- գիտության և տեխնիկայի զարգացման կանխատեսվող գերակա ուղղությունների վարկանիշային ցանկի ձևավորում,
- գիտության և տեխնիկայի զարգացման գերակա ուղղությունների ցանկի ձևավորում՝ ըստ ֆինանսական ռեսուրսների և նպատակահարմարության:

Հայագիտությունը, որպես պետության համար ռազմավարական կարևոր նշանակություն ունեցող բնագավառ, պետք է իր առաջնահերթ տեղն ունենա գերակայությունների ցանկում:

Հայաստանի Հանրապետությունում գիտության և տեխնիկայի զարգացման գերակայությունների ձևավորման

ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐՆ ԵՆ.

- պետության համար կարևորագույն նշանակություն ունեցող ռազմավարական խնդիրների լուծումը,
- միջազգայնորեն հեռանկարային համարվող գիտահետազոտական խնդիրների լուծումը,
- տվյալ ուղղությամբ գիտական դպրոցի առկայությունը (կամ դրա հիմնադրման հնարարավորությունը),
- ազգային անվտանգությունից բխող խնդիրների լուծումը:

ՉԱՓԱՆԻՇՆԵՐՆ ԵՆ.

- հետազոտությունների իրագործման համար անհրաժեշտ և բավարար պայմանների (կամ դրանց ստեղծման հնարավորությունների) առկայությունը,
- հետազոտությունների իրականացման տնտեսական նպատակահարմարությունը,
- հանրապետությունը գիտատեխնիկական նոր մակարդակի բարձրացնելու հնարավորությունը,
- համաշխարհային շուկայում գիտատար ապրանքների և ծառայությունների ուրույն տեղի պահպանման (կամ ստեղծման) հնարավորությունը,
- հանրապետության տնտեսական զարգացմանը նպաստելու աստիճանը,
- հանրապետության բնակչության առողջության պահպանմանը և կյանքի որակի բարձրացմանը նպաստելու աստիճանը,
- ազգային անվտանգության մակարդակի բարձրացման հնարավորությունը,
- տեխնոլոգիական անվտանգության մակարդակը բարձրացնելու հնարավորությունը,
- արդիականության աստիճանը՝ բնապահպանական տեսանկյունից։

Ս. ՍԵՅՐԱՆՅԱՆ